## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԶԱՔԱՐԻԱ Ա ՁԱԳԵՑԻ
## (855-876)

*Սկիզբը՝ թիվ 13*

Թուրքական զորագնդերը գլխավորող հրամանատարները, որ նույնպես թուրք էին, շուտով փորձանք դարձան Աբասյան խալիֆայության համար: Վասըֆի գրգռելով՝ նրանք սպանեցին Մութավաքիլին եւ խալիֆ հռչակեցին նրա որդի Մուհամեդ-Աբու-Ջաֆարին կամ Մունթասըր-Պիլլահին: Սա փորձեց ետ կանգնել հոր քաղաքականությունից, սակայն շարունակեց նրա ցոփ ու խենեշ կյանքը եւ մահացավ 862 թվին՝ 5 ամիս թագավորելուց հետո: Սակայն շատ հնարավոր է, որ նա չմահացավ իր բնական մահով, այլ նրան թունավորեցին: Թուրք հրամանատարները, այլեւս չվստահելով Մութավաքիլի տոհմին, գահ բարձրացրին նրա Մուհամեդ անունով եղբոր որդուն՝ Ահմեդ-Աբուլ-Աբասին, որն ստացավ Մըսթային-Պիլլահ անունը: Սա իր քաղաքականության պատճառով ներքին եւ արտաքին թշնամությունների տեղիք տվեց եւ ծնեց ապստամբություններ: Աթամեշ վեզիրին առաջ մղելը լոկ գրգռեց թուրք զորավարներին՝ Վասըֆին, Բուղա-Սաղիրին, Բաղըրին եւ Մուսային, որոնք համարձակվեցին անգամ հարձակվել Սամառայի վրա, որն այրեցին ու ավերեցին: Սակայն սրանք էլ միասնական չգտնվեցին, որ հնարավորություն տվեց խալիֆին սպանել Բաղըրին: Դրան ի պատասխան՝ Վասըֆը եւ Բուղա-Սաղիրը խալիֆ հռչակեցին Մունթասըրի եղբայր Մուհամմեդին: Մըսթայինը համաձայնվեց անձնատուր լինել՝ պայմանով, որ իրեն չսպանեն, սակայն աքսորվելով՝ Բասրայի մոտ դաժան գանակոծության ենթարկվեց եւ մահացավ 866 թվին: Նոր խալիֆը՝ Մուհամեդ-Աբու-Աբդուլլան, կոչվեց Մութազ-Պիլլահ եւ մրցակիցներից ու վտանգավոր անձանցից ազատվելու համար սպանեց իր եղբորը, մերձավոր հարազատներին եւ իրեն օգնած Վասըֆ ու Բուղա-Սաղիր զորավարներին: Սրա հետեւանքով ապստամբեցին թուրքական զորագնդերը՝ սպանված հրամանատարների որդիների առաջնորդությամբ: Մութազը ձերբակալվեց, լավ գանակոծվեց եւ սաստիկ արեւի տակ մերկացված պահվեց այնքան, մինչեւ որ գահից հրաժարվեց: Շուտով, սակայն, նրան սպանեցին գետնափոր նկուղի մեջ 869 թվին: Խալիֆ հռչակված Մոհթաշի-Պիլլահը փորձեց երկրում կարգ ու կանոն հաստատել, վերահաստատել Ղուրանի պատվիրանները, սակայն թուրքական գնդերը նրան ձերբակալեցին եւ սաստիկ ծեծով փորձեցին ստիպել իշխանությունից հրաժարվել: Սա մերժեց այդ պահանջը, սակայն ծանր տանջանքներից հետո՝ 870 թվին, դաշույնով սպանվեց: Խալիֆ դարձավ Մութավաքիլի որդիներից Ահմեդ-Աբուլ-Աբասը: Խռովությունները դադարեցին, թուրքական գնդերը հնազանդության բերվեցին, եւ նոր խալիֆը, որ հայտնի է Մոհամեդ-Պիլլահ անունով, իշխեց 23 տարի՝ մինչեւ 892 թիվը:

Մինչ Արաբական խալիֆայությունը փոթորկվում էր ներքին խռովություններից, Աշոտ Բագրատունի սպարապետը եւ Զաքարիա կաթողիկոսը աշխատում էին խաղաղության մեջ պահել երկիրը եւ աստիճանաբար վերականգնել քայքայված տնտեսությունը: Երբեմն-երբեմն կռիվներ էին բռնկվում հայ իշխանների միջեւ, որոնք Աշոտ սպարապետի կողմից հմտորեն դադարեցվում էին: Վիճակը սկսեց դեպի լավը փոխվել, երբ բանտարկության ու աքսորի մեջ գտնվող հայ իշխանները հետզհետե կարողացան վերադառնալ հայրենիք: 306 թվին վերադարձավ Աշոտ Արծրունու որդի Գրիգոր-Դերենիկը, իսկ մեկ տարի անց՝ 307-ին, Աշոտ Արծրունին: Գերեդարձները սկսեցին համարձակորեն վերադառնալ քրիստոնեության հավատին եւ վերատիրել իրենց տիրույթներին ու կալվածներին: Հայտնի է, որ մահմեդականություն ընդունածն իսլամից հրաժարվելու դեպքում ենթակա է մահապատժի, ինչպես կատարվել էր Վահան Գողթնացու, Հովսեփ ու Սահակ Կարնեցիների հետ, ուստի առաջին հայացքից խիստ զարմանալի է նրանց այդ վարքագիծը: Անշուշտ, դա մեծապես բացատրվում է խալիֆայության վիճակով եւ հայ հոգեւորականության՝ ի դեմս Զաքարիա կաթողիկոսի, մեծ հանդուրժողականությամբ, որը հնարավորություն տվեց վերադարձած իշխաններին վերադառնալ Հայ եկեղեցու գիրկը:


Զվարթնոց. Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի նստավայրի ավերակները

Հայաստան ուղարկվեց նոր ոստիկան՝ Ալի-Արմանի անունով: Սա իսլամացած հայ էր, եւ հոր անունն էլ Վահե էր, չնայած կարծիք կա, որ նա Հայաստանում ծնված արաբ էր կամ պաշտոնավարած դեմք, որը ստացել էր Արմանի կոչումը: Արաբական արքունիքը ճանաչեց հայ իշխանների իրավունքն իրենց տիրույթների նկատմամբ, իսկ նրանց առաջնորդ կարգվեց հայ իշխաններից մեկը՝ իշխանաց իշխանի տիտղոսով: Վերջինս կապող օղակ էր դառնում Հայաստանի եւ արաբական արքունիքի միջեւ: Հարկերի հավաքումը կատարվում էր իշխանաց իշխանի հսկողությամբ, իսկ հավաքված հարկերն ուղարկվում էին Ատրպատականի ոստիկանին, որն էլ դրանք առաքում էր արքունիք:

Հայաստանը, ընդհանուր առմամբ, սկսել էր հանգիստ շնչել եւ ամոքել իր վերքերը: Հայոց սպարապետն ու կաթողիկոսն ամեն ջանք գործադրում էին երկրի վերաշինության եւ խաղաղության ու ստեղծագործ աշխատանքի համար: Սակայն ավատատիրական երկպառակությունները երբեմնակի խռովում էին երկրի անդորրը: Ապուպելճի որդի Գուրգենը, որ Վասպուրականի իշխաններից էր, Բուղայի արշավանքի ժամանակ ապաստանել էր Քուրդիկ Մամիկոնյանի տիրույթ Բագրեւանդում, իսկ այնուհետեւ անցել Սպերի Գաղաբար՝ Բագրատունի իշխանի մոտ: Սա վերջինիս օգնեց արաբական արշավանքի ժամանակ, փորձեց անցնել հույների կողմը, սակայն ի վերջո Սմբատ Բագրատունու միջնորդությամբ հաշտվեց Բուղայի հետ եւ մնաց Հայաստանի արաբական բաժնում: Լսելով, որ Վասպուրականի վրա նոր հարձակման ժամանակ սպանվել է Սահակ Աբումկրեմ իշխանը, իսկ Ապուջափր Արծրունու գունդը գրվել է, եւ Վասակ Կովկերն արաբների կողմից իշխանություն է ստացել, Գուրգեն Ապուպելճը եկավ Վասպուրական եւ արաբներին քշելով՝ տիրեց երկրամասի գլխավոր իշխանությանը: Բուղան նրա դեմ ուղարկեց Բուտել զորավարին, բայց Գուրգեն Ապուպելճը նրան հաղթեց, եւ Բուղան ճանաչեց նրա իշխանությունը: Գուրգենը իշխեց 4 տարի, որից հետո նրա դեմ արշավեց Աշոտ Արծրունու եղբայրը՝ Գրիգորը՝ նրան իշխանությունից զրկելու համար: Սակայն շուտով նրանք համաձայնության եկան եւ երկրամասը բաժանեցին միմյանց միջեւ: Գրիգորը մեկ տարի անց մահացավ, եւ Աշոտ Արծրունու որդի Վահանը փորձեց տիրանալ նրա բաժնին եւ հանդիպեց Գուրգենի դիմադրությանը: Իսկ երբ եկավ Աշոտ Արծրունու որդի Գրիգոր-Դերենիկը, նրա դեմ դուրս եկավ նրա հավասուրաց հորեղբայրը՝ Գուրգենը, որն առաջարկեց Գուրգեն Ապուպելճին՝ միմյանց միջեւ բաժանել երկիրը եւ հին իշխանի որդուն զրկել տիրույթներից: Սա չհամաձայնեց եւ բյուզանդացիների կողմը փախչելիս ձերբակալվեց արաբ զորավարներ Բշրի եւ Չքրի կողմից ու հանձնվեց Աշոտ սպարապետին, որն էլ նրան ուղարկեց Ատրպատականի ոստիկանին: Գուրգեն Ապուպելճին իսլամացնել չհաջողվեց, չնայած նա ենթարկվեց խոշտանգումների, իսկ մյուս Գուրգենը շուտով մահացավ, երբ բոլորը ազատություն ստացան, այդ թվում նաեւ Գուրգեն Ապուպելճը: Վերջինս, վերադառնալով Վասպուրական, ձերբակալվեց՝ այս անգամ Դերենիկի կողմից: Դերենիկի ծառաներից մեկը նրան ազատեց եւ անգամ դաշույն տվեց, որ քնած Դերենիկին սպանի, սակայն Գուրգեն Ապուպելճը նրան չսպանեց եւ բավական համարեց փախչելը: Մի ճգնավոր, որի մոտ հանգրվանեց նա, Գուրգեն Ապուպելճին կապելով՝ հանձնեց Դերենիկին, եւ նա կրկին հայտնվեց բանտում: Զաքարիան եկավ Վասպուրական եւ հայրապետական հորդորներով կարողացավ բանտից ազատել տալ Գուրգեն Ապուպելճին եւ հասավ այն բանին, որ Մարդաստանի գավառը հանձնվեց նրան՝ որպես սեփական տիրույթ: Ըստ երեւույթին՝ չվստահելով Դերենիկին՝ նա քաշվեց Տարոնի կողմերը: Որոշ ժամանակ անց Աշոտ իշխանաց իշխանը հարձակվեց Դերենիկի վրա եւ որպես անհնազանդի՝ ձերբակալեց: Այս անգամ Գուրգեն Ապուպելճը հանդես եկավ Դերենիկի պաշտպանությամբ: Գալով Ռշտունյաց Նորագյուղ ավանը՝ նա սպառնաց Աշոտին այն աստիճան, որ վերջինս Դերենիկին ազատ արձակեց եւ Գուրգենի խորհրդով՝ այրիացած Դերենիկին կնության տվեց իր դստերը: Սրանով Բագրատունիների եւ Արծրունիների միջեւ հաշտություն կայացավ:



Զաքարիայի աթոռակալության շրջանում Դվնում տեղի ունեցավ մեծ երկրաշարժ: Շատ շենքեր կործանվեցին, սակայն կաթողիկե տաճարն անվնաս մնաց: Շատ բնակիչներ մնացին փլատակների տակ, իսկ մյուսները ձմռան ցրտին ստիպված եղան դուրս գալ փողոցներն ու հրապարակները: Երկրաշարժը եղավ 863 թվին, չնայած Սամվել Անեցին այն դնում է 865 թվին: Այս շրջանում էր, որ երկիր վերադարձան Հովհաննես Արծրունյաց եպիսկոպոսը եւ Գրիգոր Արծրունի քահանան: Հովհաննեսը հրաժարվեց հովվապետել եւ քաշվեց մենաստան, անշուշտ, տկարացած առողջության պատճառով: Նրան եպիսկոպոսական աթոռին փոխարինեց մեկ այլ Հովհաննես: Նանա Ասորի սարկավագն էլ գերությունից ազատվեց եւ կրկին եկավ Հայաստան՝ ծառայելով Հայոց Եկեղեցուն:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

## ՍԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ ԿԱՐԹԱԳԵՆԱՑԻ

# ԳԻՐՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Սկիզբը՝ թիվ 1-4, 6*

### Մաս Զ

Այսպես Մովսեսի եւ Ահարոն քահանայի դեմ ապստամբած Կորխը, Դաթանը եւ Աբիրոնը, որ փորձում էին յուրացնել զոհ մատուցելու իրավունքը, նույն պահին էլ պատժվեցին նման հանդգնության համար. երկիրը, քանդելով իր կապերը, բացեց անհատակ մի խորխորատ, եւ ահռելի կլափը ողջ-ողջ կուլ տվեց նրանց: Ոչ միայն Աստծո զայրույթը ոչնչացրեց սադրիչներին, այլեւ Տիրոջից առաքված կրակը շտապեց մոխրի վերածել նրանցից երկու հարյուր հիսունին, որք միացել էին այդ անմտության մասնակիցներին ու նպաստողներին (Թվեր ԺԶ)՝ հիշեցնելով եւ այդ կերպ ցույց տալով, որ Աստվածային նվիրապետության քայքայմանն ուղղված անօրենների ինքնակամ բոլոր հանցափորձերն Աստծո դեմ են: Այդպես եւ Օզիաս թագավորը, երբ ձեռքն առնելով բուրվառը եւ հակառակ Աստծո օրենքին՝ զոհ մատուցելու իրավունքն իրեն վերապահելով՝ չցանկացավ հնազանդվել եւ զիջել Ազարիա քահանային, ով արգելում էր իրեն, Աստծո բարկությամբ խայտառակվեց եւ պատժվեց ճակատի բորոտությամբ՝ մարմնի այն մասում, որտեղ նշան են ստանում Աստծուն հաճեցնողները (Բ Մնաց. ԻԶ): Ահարոնի որդիները նույնպես, երբ խորանում անմաքուր կրակ էին մատուցում՝ անտեսելով Աստծո արգելքը, անմիջապես էլ այրվեցին պատժող Աստծո առաջ (Ղեւտ. Ժ): Հենց այսպիսիներին են ընդօրինակում եւ հետեւում նրանք, ովքեր արհամարհելով աստվածային պատվիրանները՝ հրապուրվում են օտար վարդապետությամբ եւ ներմուծում մարդկանց կողմից հաստատված կարգեր: Տերն Իր Ավետարանում բացահայտում եւ հանդիմանում է նման մարդկանց՝ ասելով. «Աստծու պատվիրանը թողած՝ մարդկանց ավանդությունն եք պահում» (Մարկ. Է 8):

Այս հանցանքն ավելի ծանր է, քան, ըստ էության, անառակների կատարածը, որոնք հետո զղջալով իրենց մեղանչումի համար՝ աղաչում են Աստծուն միանգամայն բավարար ապաշխարությամբ: Մի տեղ Եկեղեցին են փնտրում եւ աղաչում նրան, մեկ այլ տեղ՝ հակառակվում Եկեղեցուն: Մի տեղ անհրաժեշտությունը կարող էր անօրենության հացնել, մեկ այլ տեղ՝ ազատ կամքը: Մի տեղ անառակը միայն իրեն է վնասում, իսկ մի ուրիշում՝ որեւէ աղանդավոր կամ հերձվածող ջանում է շատերին խաբեությամբ իր հետեւից տանել: Մի տեղ կորստաբեր է մի հոգու համար, մեկ այլ տեղ վտանգը շատ-շատերի համար է: Մեկը հասկանում է, որ ինքը վստահաբար մեղանչել է, ողբում է դրա համար եւ զղջում, իսկ մյուսը, հպարտ իր մեղքով եւ բավականություն ստանալով հենց անօրենություններից, բաժանում է զավակներին մայրերից, ոչխարներին հափշտակում Հովվից, Աստծո խորհուրդները կործանում, եւ եթե անառակը մեկ անգամ էր մեղանչել, սա ամեն օր է մեղանչում: Վերջապես, անառակը, արժանանալով մարտիրոսության, կարող է արժանի դառնալ եւ խոստացված արքայությանը, իսկ մյուսը, եթե նույնիսկ մահվան մատնվի՝ Եկեղեցուց դուրս, չի կարող Եկեղեցու պարգեւներին արժանանալ:

Թող ոչ ոք չզարմանա, սիրեցյալ եղբայրներ, որ անգամ խոստովանողներից ոմանք նույն վիճակին են հասնում եւ այդ իսկ պատճառով նույնքան անօրեն ու ծանրորեն մեղանչում: Խոստովանությունը չի ազատում սատանայի դավերից եւ այս աշխարհում դեռեւս գտնվողին չի պատսպարում առհավետ դարի գայթակղություններից, վտանգներից, հարձակումներից եւ հարվածներից:

*Շարունակությունը էջ 6*



# ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ԴԻՄԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ



Դիմանկարչությունը հայ իրականությանը ծանոթ էր վաղ ժամանակներից: Այդ մասին ուշագրավ վկայություններ են պահպանվել մատենագիտության մեջ: Ագաթանգեղոսում դիմանկարիչները կոչվում են «պատկերագործներ», որոնք ճշտությամբ նմանահանում էին մարդու պատկերը: Մովսես Խորենացին «Հայոց պատմության» էջերում օգտագործում է «կենդանագիր պատկեր» դարձվածքը, որը բառացի թարգմանություն է հունարենից եւ նշանակում է կենդանի մարդու պատկեր:

Հայկական մանրանկարներում մեզ հայտնի ամենավաղ դիմանկարը ԺԱ դարից է, սակայն դրանց սերտ առնչությունը Ե-Է դարերի ճարտարապետության մեջ պահպանված կտիտորական քանդակների հետ՝ համոզիչ վկայություն է, որ դիմանկարչական արվեստը գոյություն է ունեցել դեռեւս Ե-Ժ դարերում ընդօրինակված ձեռագրերում, որոնք չեն պահպանվել:

Միջնադարյան մանրանկարչական արվեստում դիմանկարն այն միջոցն էր, որտեղ նկարիչը հնարավորություն ուներ իր ճանաչողական ու ստեղծագործական կարողությունների սահմաններում ստեղծելու մարդու իրական կերպարը:

Մանրանկարչական դիմանկարները հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի.

Ա. Դիմանկարներ, որ կատարված են բնորդից:

Բ. Երեւակայական դիմանկարներ, որ կատարված են փաստական նյութի հիման վրա:

Առաջին խմբում կարելի է դասել այն դիմանկարները, որոնք կատարվել են տվյալ անձին ժամանակակից նկարիչների կողմից: Դրանք իրական մարդկանց պատկերներ են, մեծամասամբ ձեռագրերի պատվիրատուներ կամ ժամանակի նշանավոր գործիչներ: Այս դիմանկարներից մեզ ծանոթ ամենավաղ օրինակը Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի 1007 թվականի Ավետարանում զետեղված՝ պատվիրատու Հովհաննեսի դիմանկարն է (Վենետիկ, ձեռ. 887, թերթ 8ա): Ձեռագիրը գրվել է Ադրիանուպոլսում:

Դիմանկարների երկրորդ եւ համեմատաբար հարուստ խումբը ներկայացնում է այն նկարները, որոնք ստեղծվել են տվյալ անձին ոչ ժամանակակից նկարչի կողմից: Դրանք մեծամասամբ պատմական անձանց պատկերներ են՝ ստեղծված նկարչի երեւակայությամբ: Կերպարը ստեղծելիս՝ նկարիչն առաջնորդվել է պատկերվող անձին բնորոշող առավել հատկանշական կողմով: Այդ մանրանկարները ստեղծվել եւ հետագայում ընդօրինակվել են զանազան գրչատներում՝ ընգրկելով ԺԲ-ԺԸ դարերի ժամանակահատվածը: Ձեռագիր տարբեր մատյաններում պատկերված են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթեւը, Մովսես Խորենացին, Գրիգոր Նարեկացին եւ այլք: Նրանց շարքում առավելապես առանձնանում է Գրիգոր Նարեկացու կերպարը:

Գրիգոր Նարեկացու դիմապատկերներ կան ոչ միայն հռչակավոր «Մատյան ողբերգության» Աղոթամատյանում, այլեւ բազմաթիվ ժողովածուներում, որտեղ տեղ են գտել նրա մյուս գործերը՝ տաղերը, գանձերը, Երգ երգոցի մեկնությունը, աղոթքները, ներբողները եւ այլն:

Միայն Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում կան երկու տասնյակից ավելի ձեռագրեր, որոնցում ամփոփված են Գրիգոր Նարեկացուն պատկերող նկարները: ԺԲ-ԺԸ դարերի այս մատյանները ստեղծվել են Սկեւռայում (Կիլիկիա), Վասպուրականի գրչության տարբեր վայրերում, Կարինում, հայկական գաղթօջախներում՝ Լվով, Ղրիմ, Կ.Պոլիս, Վենետիկ եւ այլն:

Գրիգոր Նարեկացու մեզ հասած հնագույն դիմանկարները չորսն են: Բոլորն էլ գտնվում են 1173 թվականին Սկեւռայում ընդօրինակված «Մատյան ողբերգության» ձեռագրում (ՄՄ. ձեռ. 1568): Նկարիչը Գրիգոր Սկեւռացին է (Մլիճեցի): Այս դիմապատկերներն արդեն իսկ արժանացել են մասնագետների գնահատականին եւ բազմիցս հրատարակվել:

Հիշյալ ձեռագրի չորս դիմանկարներից երեքի հորինվածքի խորքում կան Նարեկացուն բնորոշող հետեւյալ գրությունները. Փիլիսոփա, Գրիգոր Հսկող, Սուրբն Գրիգոր Ճգնաւոր, իսկ չորրորդում նա ներկայացված է որպես մեղավոր:

Առաջին պատկերում Գրիգորը փիլիսոփա է, նստած է բազկաթոռին՝ մատյանը գրելու պահին: Ձեռքին ունի, այսպես կոչված, «գնդիկավոր» գրիչը: Դա ինքնահոս գրչի նախատիպ օրինակն է, որի գրչածայրը դրված է Մատյանի Բան Ա-ի «Ձայն հառաչանաց...» սկզբնատողին: Հետաքրքրական է, որ 1280 թվականին մի անհայտ նկարիչ ճիշտ նույն հորինվածքով պատկերել է Դավիթ Անհաղթին՝ նստած, ձեռքին գրիչ, որի գրչածայրը դրված է իր մատյանի սկզբնատողին. «Որք մի անգամ իմաստասիրութեան...» (ՄՄ. ձեռ. 1746): Կարծում ենք, որ Գրիգոր Նարեկացու եւ Դավիթ Անհաղթի դիմանկարների նախօրինակները պետք է ավելի վաղ ժամանակներում ընդօրինակված նրանց աշխատություններում պահպանված լինեին:

Երկրորդ դիմանկարում Գրիգոր Նարեկացին ներկայացված է կանաչազարդ դաշտում կանգնած, ձեռքերը պարզած կապույտ երկնում երեւացող Քրիստոսին: Սեգմենտի մեջ պատկերված Քրիստոսն օրհնում է Գրիգորին: Նարեկացու գլխի մոտ՝ ոսկե խորքին, գրված է. «Գրիգոր Հսկող»: Հսկող նշանակում է՝ տքնաբան, անձը տառապանքի ենթարկող, ներողություն կրող, արթուն, հոգով ապաշխարող: Նարեկացին իր տառապյալ սրտի խոսքն է ուղղում Աստծուն:

Երրորդ հորինվածքում Նարեկացին պատկերված է ոսկե խորքով զարդարուն խորանի մեջ: Նա կանգնած է դիմահայաց, մի ձեռքում պահել է խաչը, իսկ մյուսով կրծքին սեղմել Սուրբ Գիրքը: Նրա երկու կողմերում՝ ուսերից վեր, գրված է. «Ս(ուր)բն Գրիգոր Ճգնաւոր» (նկ. 1): Ելնելով Գրիգոր Նարեկացու վարքի հաղորդած տեղեկություններից՝ Գրիգոր Սկեւռացին այս պատկերում շեշտել է ճգնակենցաղ սուրբի հոգեւոր սխրանքը:

Չորրորդ հորինվածքում Նարեկացին ծունկի է եկել Քրիստոսի առջեւ: Նա աղերսում է ոչ միայն իր, այլեւ բոլորի մեղքերի համար, դառնորեն սգում Աստծուց հեռացած մարդու ողբերգությունը:

Գրիգոր Նարեկացու դիմանկարները ստեղծող նկարիչներն ապրել են տարբեր ժամանակաշրջաններում եւ տարբեր վայրերում: Նրանցից յուրաքանչյուրը, անդրադառնալով Նարեկացու կերպարին, երբեմն կրկնել է պատկերագրական հին օրինակները, երբեմն էլ ստեղծել ժամանակին համահունչ նոր հորինվածքներ՝ բնականաբար հարազատ մնալով իրենց ինքնուրույն ոճական, գեղարվեստական առանձնահատկություններին:

Գրիչ Մաթեոսի՝ 1431 թվականին Անկեղակոթում (Վասպուրական) ընդօրինակած «Նարեկում» (ՄՄ. ձեռ. 1569, թերթ 4 բ) Սուրբ Գրիգորը պատկերված է ծնկաչոք աղերսելիս (նկ. 2):

*Շարունակությունը՝ էջ 7*



# Քրիստոս՝ Կյանք եւ Լույս

## «Կյանքը Նրանով էր: Եվ այդ կյանքը մարդկանց համար լույս էր» (Հովհ. Ա 4):



Ինչպես կոմպոզիտորն է իր ստեղծագործությունը սկսում ուշագրավ, հնչեղ ակորդով՝ սկզբից իսկ հաստատելով երաժշտության թեմատիկան, ապա զարգացնում, այդպես էլ Հովհաննես առաքյալն իր Ավետարանի հենց սկզբում կիրառում է երկու առանցքային եզրույթ՝ կյանք եւ լույս, որոնց վրա էլ կառուցում եւ զարգացնում է Քրիստոսի փրկագործության գաղափարաբանությունը:

Հովհաննու Ավետարանն սկսվում եւ եզրափակվում է կյանքի գաղափարով: Առաջին իսկ գլխում ազդարարվում է, որ Քրիստոսով է կյանքը, վերջում էլ՝ «թե Հիսուս Քրիստոս է Աստծո Որդին. նաեւ՝ որպեսզի հավատաք ու Նրա անունով հավիտենական կյանքն ընդունեք» (Հովհ. Ի 31):

Կյանք բառը շարունակաբար Հիսուսի շուրթերին է: Նա տրտմում եւ ափսոսում է, որ մարդիկ չեն կամենում դեպի Իրեն գալ, որպեսզի կյանք ունենան (տե՛ս Հովհ. Ե 40): Ազդարարում է, թե Ինքը եկավ, որ կյանքն ունենան ավելիով ու լիությամբ (տե՛ս Հովհ. Ժ 10): Հայտարարում է, որ Ինքն է մարդկանց կյանքը տալիս, եւ որ նրանք երբեք կորստյան չեն մատնվի (տե՛ս Հովհ. Ժ 28): Հռչակում է՝ «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը եւ Կյանքը» (Հովհ. ԺԴ 6):

Հովհաննու Ավետարանի բառամթերքում *կյանք* բառը հանդիպում է 35 անգամ, իսկ *ապրել* կամ *կյանք ունենալ* արտահայտությունը՝ 15: Իսկ ի՞նչ նկատի ունի Հովհաննեսը՝ կյանք ասելով:

**ա)** Ավետարանչի հաստատմամբ՝ կյանքը հակադրությունն է ոչնչացման, դատապարտության ու մահվան: Աստված առաքել է Իր Որդուն, որ ով հավատում է Նրան, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա (տե՛ս Հովհ. Գ 16): Ով լսում եւ հավատում է Աստծուն, չի դատապարտվում, այլ մահվանից անցնում է կյանք (տե՛ս Հովհ. Ե 24): Հակոտնյա իրողություններ են կյանքի հարությունը եւ դատաստանի հարությունը (տե՛ս Հովհ. Ե 29):

Այդպես, Հիսուս Քրիստոսով մարդը ստանում է լիարժեք ապահովություն ու անվտանգություն թե՛ այս եւ թե՛ գալիք կյանքում: Եթե մարդ արարածը Հիսուսին չընդունի որպես իր փրկչի, ապա չի կարող ասել, որ ապրում է ընդհանրապես, քանի որ առանց Քրիստոսի՝ մարդը սոսկ գոյություն ունի, անտեղյակ ու անհաղորդ ճշմարիտ կյանքին: Աստծո Որդու բերած կյանքը հակառակ է մարդու լոկ աշխարհային, մարմնական, անցողիկ ու անասնական կյանքին: Միմիայն Քրիստոսով մարդու գոյությունը կարող է վերածվել պատվավոր, լիակատար կյանքի, իսկ մահը՝ լիակատար կյանքի սկզբի:

**բ)** Բայց Հովհաննես ավետարանիչն այն հաստատուն համոզմունքն է արտահայտում, որ թեեւ Հիսուս է բերում կյանքը, սակայն Հայր Աստված է շնորհում այն: Հոր կամքով է Որդին աշխարհ ուղարկվել, որպեսզի ով տեսնում է Նրան ու հավատում, կյանք ունենա (տե՛ս Հովհ. Զ 40): Քրիստոս կյանքը տալիս է այնքան, որքան Հայրն է Իրեն տվել (տե՛ս Հովհ. Ե 26): Կյանքի ու կենսականության ակնաղբյուրն Աստված է, Ով ստեղծել է մարդուն, որպեսզի նա ճշմարիտ կյանք ունենա: Մարդը, սակայն, մեղքի պատճառով կորստյան է մատնել այդ կյանքը եւ միայն գոյություն ունի: Աստված ուղարկել է Իր Որդուն՝ հրազեկելու, թե ի՞նչ է ճշմարիտ կյանքը:

**գ)** Հուսկ, բնական հարցադրումն է հետեւում՝ ի՞նչ է, ինչպիսի՞ն է ճշմարիտ կյանքը: Հովհաննեսը կյանքը բնութագրում, բնորոշում է հավիտենական եզրույթով, սակայն ոչ տեւողություն իմաստով, քանի որ շարունակական, մշտատեւ կյանքը նույնպես սարսափելի, աղետալի իրողություն է, եթե այն լոկ ժամանակի ընթացք է: Հավիտենական կյանքն ավելին է, քան կյանքի ժամանակի տեւականությունը, եւ հասկացվում է որոշակի որակով: Այդ կյանքի բնորոշիչը, բանալին հավիտենական եզրույթն է, որ բազմիցս կիրառված է Աստվածաշնչում՝ Աստծուն բնութագրելու համար: Հավիտենականը, ըստ էության, միայն Աստված է, ուստի հավիտենական է այն կյանքը, որ Աստված ունի: Հիսուս, մեզ հավիտենական կյանք առաջարկելով, հրավիրում է մտնել, հաղորդվել ու հարաբերվել հենց Աստծո կյանքին:

**դ)** Իսկ ինչպե՞ս կարող է մարդը հաղորդակցվել այդ կյանքին. Ավետարանի պատասխանը միանշանակ է՝ հավատալով Հիսուս Քրիստոսին: Հավատալ բառը Հովհաննեսը գործածում է մոտ 70 անգամ: «Ով հավատում է Որդուն, ընդունում է հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 36): «Ով հավատում է,- ասում է Հիսուս,- ունենում է հավիտենական կյանքը» (Հովհ. Զ 47): Հայր Աստծո կամքն է, որ մարդն ունկնդիր լինի Քրիստոսի խոսքին, հավատա Նրան եւ հավիտենական կյանք ունենա (տե՛ս Հովհ. Ե 24):

**Ի՞նչ նկատի ունի Ավետարանը՝ հավատալ ասելով.**

**ա)** Նախ՝ ունենալ այն համոզմունքը, որ Հիսուս Քրիստոս իրապես ու ճշմարտապես Աստծո Որդին է, քանզի եթե Հիսուս սոսկ մարդ է, ապա պատճառ, հիմք չկա Նրան՝ որպես Փրկչի, անվերապահ հնազանդություն ցուցաբերելու:

*Շարունակությունը էջ 6*

**ԱԼԵՔՍԵՅ ՕՍԻՊՈՎ**

# Ո՞Վ Է ԱՍՏՎԱԾ

## (մասնակի կրճատումներով)

Կրոն կարելի է անվանել միայն այն աշխարհայացքը, որում կա Աստծո մասին միտք, Աստծո գաղափար, Աստծո ճանաչում, հավատ առ Աստված: Եթե դրանք չկան, չկա եւ կրոն: Մենք այդպիսի հավատը կարող ենք անվանել ինչպես կամենանք՝ շամանություն, ֆետիշիզմ, աստղագուշակություն, մոգություն: Բայց դա կրոն չէ, դա կեղծ կրոն է, կրոնի այլասերում: Այսօր ցանկանում ենք խոսել յուրաքանչյուր կրոնի եւ, իհարկե, քրիստոնեության հիմնական հարցի՝ Աստծուն վերաբերող վարդապետության մասին:

Աստծո մասին հարցումը բարդ է: Ստիպված կլինենք բազմիցս լսել. «Դուք՝ քրիստոնյաներդ, պատմում եք մեզ Աստծո մասին, ապացուցում, որ Նա կա: Իսկ Ո՞վ է Նա: Ո՞ւմ մասին եք խոսում, երբ արտասանում եք «Աստված» բառը»: Ահա դրա մասին էլ այսօր կխոսենք ձեզ հետ:

Սկսենք հեռվից: Սոկրատի աշակերտ Պլատոնը մի այսպիսի միտք ունի՝ սկզբնապատճառները (որեւէ բարդություն չունեցող պարզ իրերը) անսահմանելի եւ աննկարագրելի են: Իրոք, բարդ իրերը մենք կարող ենք սահմանել պարզերի միջոցով: Իսկ ինչո՞վ սահմանենք պարզերը: Եթե մարդը երբեք կանաչ գույնը չի տեսել, ինչպե՞ս բացատրենք նրան՝ ի՞նչ է դա: Մնում է առաջարկել նրան. «Տես»: Բացատրել, թե ինչ է իրենից ներկայացնում կանաչ գույնը, անհնար է: Մի առիթով հայր Պավել Ֆլորենսկին իր խոհարարուհուն՝ պարզ ու անգրագետ մի կնոջ, հարցրեց. «Ի՞նչ է արեւը»: Փորձում էր նրան: Կինը տարակուսանքով նայեց Ֆլորենսկուն եւ ասաց. «Արե՞ւը: Է՜, տեսեք եւ կիմանաք»: Ֆլորենսկին չափազանց գոհ մնաց պատասխանից: Իրոք, կան բաներ, որ անհնար է բացատրել, կարելի է միայն տեսնել:

«Ո՞վ է Աստված» հարցին պետք է այսպես պատասխանել: Քրիստոնեությունը ասում է, որ Աստված պարզ էություն է, ամենապարզը բոլոր գոյություններից: Նա ավելի պարզ է, քան արեգակը: Նա այն իրողությունը չէ, որի մասին մենք կարող ենք դատողություններ անել եւ դրա միջոցով հասկանալ ու ճանաչել: Նրան կարելի է միայն «տեսնել»: Միայն Նրան «նայելով» ճանաչել, թե Ով է Նա: Դուք չգիտեք՝ ինչ է արեգակը. տեսեք, չգիտեք՝ Ով է Աստված. տեսե՛ք: Ինչպե՞ս. «Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. Ե 8): Կրկնում եմ, ոչ բոլոր իրերն են ենթակա խոսքով նկարագրման եւ սահմանման: Չէ՞ որ մենք չենք կարող կույրին բացատրել՝ ինչ է լույսը, իսկ խուլին՝ երրորդ օկտավայի դո հնչյունը կամ առաջինի ռե-ն: Իհարկե կան բազմաթիվ իրեր, որոնց մասին մենք խոսում ենք եւ բավականին հասկանալի բացատրում: Բայց քիչ չեն նաեւ այնպիսիք, որ դուրս են հասկանալի բացատրության սահմաններից: Դրանք կարելի է ճանաչել միայն անմիջական տեսությամբ:

Գիտե՞ք՝ ինչն էր նախաքրիստոնեական հունա-հռոմեական գրականության մեջ անվանվում աստվածաբանություն, եւ ով՝ աստվածաբան: Աստվածաբանություն ասելով հասկանում էին աստվածների արկածների ու գործերի մասին զրույցները: Իսկ աստվածաբան էին անվանում այդ զրույցների հեղինակներին՝ Հոմերոսին, Հեսիոդոսին, Օրփեոսին: Ահա ձեզ ե՛ւ աստվածաբանություն, ե՛ւ աստվածաբաններ: Իհարկե, Աստծո մասին հետաքրքրական գաղափարներ կան Անաքսագորի, Սոկրատի, Պլատոնի, Արիստոտելի եւ այլ հին փիլիսոփաների մոտ, բայց դրանք հանրածանոթ չէին:

Իսկ ի՞նչն է քրիստոնեության մեջ անվանվում աստվածաբանություն (богословие): «Աստվածաբանություն» եզրը հունարեն «թեոլոգիա» բառի թարգմանությունն է: Իմ կարծիքով՝ շատ անհաջող թարգմանություն է, քանի որ «թեոլոգիա» բառի երկրորդ մասը՝ «լոգոս»-ը, ունի մոտ 100 իմաստ (առաջինը՝ Թեոս կամ Ֆեոս, հասկանալի է բոլորին՝ Աստված): Ի. Դվորժեցկու հին հունարեն-ռուսերեն բառարանում «լոգոս» բառի իմաստների 34 բառափունջ կա: Յուրաքանչյուր բառափնջում եւս այդ բառը մի քանի իմաստ ունի: Սակայն եթե խոսենք «լոգոս» հասկացության կրոնափիլիսոփայական հիմնական իմաստի մասին, ապա կարծում եմ՝ այն համապատասխանում է «գիտելիքին», «ճանաչողությանը», «տեսությանը»: Թարգմանիչներն օգտագործել են բառի ամենակիրառելի նշանակությունը՝ «բան» (խոսք, ռուս. слово), եւ թեոլոգիան թագմանել այնպիսի անորոշ հասկացությամբ, ինչպիսին է աստվածաբանությունը: Սակայն, ըստ էության, թեոլոգիան հարկավոր էր թարգմանել աստվածտեսություն, աստվածգիտություն, աստվածճանաչողություն: Ընդ որում՝ քրիստոնեության մեջ տեսություն, գիտություն ասելով նկատի չունեն Աստծո մասին խոսքերը կամ դատողությունները, ինչպես ընդունված էր հեթանոսների մոտ, այլ սուրբ, մաքուր մարդու անմիջական աստվածըմբռնողության յուրահատուկ հոգեւոր փորձառությունը: Այդ միտքը շատ պարզ ու դիպուկ ձեւակերպել է Հովհաննես Կղեմաքոսը. «Աստվածաբանության սկիզբը մաքրության կատարելությունն է»:



Աստվածաբանության մեջ դա կոչվում է Աստծուն ճանաչելու հոգեւոր-փորձառական մեթոդ, որը քրիստոնյային հնարավորություն է տալիս Աստծուն ճշմարտապես հասկանալով ըմբռնել Սուրբ Գրքի աստվածային Հայտնության իրական իմաստը:

Աստվածաբանության մեջ կա եւս երկու մեթոդ, եւ չնայած դրանք զուտ ռացիոնալ են, այնուամենայնիվ ունեն Աստծուն ճիշտ հասկանալու որոշակի նշանակություն: Այդ մեթոդներն են՝ ապոֆատիկը (բացասական) եւ կատաֆատիկը (դրական):

Ապոֆատիկ մեթոդը բխում է այն անառարկելի ճշմարտությունից, որ Աստված սկզբունքորեն տարբեր է բոլոր արարածներից, եւ այդ պատճառով՝ մարդկային հասկացությունների համար անհասանելի եւ աննկարագրելի: Ըստ էության՝ այս մեթոդը արգելում է որեւէ բան ասել Աստծո մասին, քանի որ Նրան վերաբերող մարդկային ցանկացած խոսք սուտ է: Հասկանալու համար, թե ինչու է այդպես, ուշադրություն դարձրեք, թե որտեղից են առաջանում մեր բոլոր պատկերացումներն ու բառերը, ինչպե՞ս են դրանք կազմավորվում: Ահա թե ինչպես: Մենք տեսնում, լսում, շոշափում (եւ այլն) ենք ինչ- որ բան եւ համապատասխանաբար անվանում: Տեսանք եւ անվանեցինք: Մոլորակ հայտնագործեցինք եւ անվանեցինք Պլուտոն: Մասնիկ հայտնագործեցինք եւ անվանեցինք նեյտրոն: Կան կոնկրետ եւ ընդհանուր, աբստրակտ հասկացություններ, կան կատեգորիաներ: Այդպես հարստանում եւ զարգանում է լեզուն: Եվ քանի որ մենք հաղորդակցվում եւ միմյանց ենք փոխանցում այդ անուններն ու հասկացությունները, ուրեմն հասկանում ենք իրար: Մենք ասում ենք սեղան եւ հասկանում՝ ինչի մասին է խոսքը, որովհետեւ այդ բոլոր հասկացությունները առաջ են գալիս՝ հիմնվելով մեր երկրային հավաքական փորձի վրա: Սակայն դրանք բոլորը շատ թերի, անկատար են նկարագրում իրական իրերը, տալիս միայն ամենաընդհանուր պատկերացում: Գեյզենբերգը՝ քվանտային մեխանիկայի հիմնադիրներից մեկը, արդարացիորեն գրում էր. «Մեր եւ աշխարհի փոխազդեցության միջոցով առաջացող բոլոր հասկացությունների եւ բառերի իմաստները չեն կարող հստակ սահմանվել: Այդ պատճառով էլ երբեք չի կարելի ռացիոնալ մտածողության ճանապարհով գալ դեպի բացարձակ ճշմարտությունը»:

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝*
*Ա. Ավետիսյանի*

# ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ



▼▼▼

Անգլիկան եկեղեցու հոգեւոր պետ Ռոուեն Ուիլիամսը նոր մրցանակ է սահմանել, որը կտրվի ամենալավ աստվածաբանական երկի հեղինակին: 15.000 ֆունտ ստերլինգ արժողությամբ մրցանակը կկոչվի Քենթրբերիի արքեպիսկոպոս եւ նշանավոր աստվածաբան Մայքլ Ռեմզիի (1961-1974թթ) անունով: Այս տարի լրանում է վերջինիս ծննդյան 100-ամյակը: Ըստ մրցութային հանձնաժողովի նախագահի՝ մրցանակը սահմանված է ոչ միայն անգլիացիների համար, այլեւ՝ քրիստոնեական բոլոր հարանվանությունների: Մրցանակն առաջինը կտրվի 2005թ. ամենալավ անգլիալեզու կամ անգլերեն թարգմանված աստվածաբանական աշխատության համար:

▼▼▼

Բուլղար Ուղղափառ Եկեղեցու Ս. Սինոդը հայտարարություն է տարածել, որում ասվում է, թե Սինոդը երբեք թույլ չի տա Եկեղեցուց դուրս մարդկանց արատավորել Բուլղար Եկեղեցու սուրբ անունը, ինչպես նաեւ մոլորեցնել մարդկանց սին խոստումներով: Մաքսիմ պատրիարքի գլխավորությամբ գործող Սինոդը Բուլղար Եկեղեցուց բաժանվածներին եւ իրենց ինքնակոչ իշխանություն վերագրողներին միության կոչ է արել: Եվ քանի որ այս կոչն անպատասխան է մնացել, ուստի Սինոդը դիմել է երկրի ղեկավարությանը՝ ետ վերցնել ոչ կանոնական եկեղեցու անդամների ձեռքում գտնվող տաճարները, վանքերը եւ եկեղեցական սեփականությունը՝ օրենքի սահմաններում: Պետությունը, անսալով Ս. Սինոդի հայտարարությանը, առգրավել է բոլոր եկեղեցիները եւ այժմ քրեական գործեր են հարուցված ոչ կանոնական մետրոպոլիտ Ինոկենտիի եւ նրա համախոհների դեմ:

▼▼▼

Բուլղար եկեղեցու հակականոնական սինոդի անդամ հայր Կամեն Բարակովը հայտարարել է, թե Մաքսիմ պատրիարքի գլխավորությամբ գործող Ս. Սինոդը Մոսկվայի Պատրիարքության մեկ մասն է: Վերջինս նշել է, որ Ալեքսի Բ-ն դեռեւս 1998թ. խանգարեց իրենց եւ չթողեց, որ Մաքսիմ պատրիարքը պատժվեր, ուստի եւ տապալվեց ուղղափառ եկեղեցիների հավաքը: Ըստ հայր Կամենի՝ այսօր Բուլղար Եկեղեցում ծագած այս պառակտումը Մաքսիմ պատրիարքի մեղքով է, որից շահում են աթեիստները եւ կոմունիստները:

▼▼▼

Իսրայելի ֆիլմերի վարձույթների ընկերություններն առայժմ վախենում են երկիր ներմուծել աշխարհում մեծ աղմուկ հանած Մել Գիբսոնի «Քրիստոսի չարչարանքները» ֆիլմը: Ընկերություններից մեկի աշխատակիցն ասել է, որ ոչ ոք չի համարձակվի այդ ֆիլմը Իսրայել բերել, քանի որ արդեն իսկ երկրի ԶԼՄ-ները ֆիլմի ռեժիսորին մեղադրել են հակահրեականություն սերմանելու մեջ:

▼▼▼

Սմոլենսկի եւ Կալինինգրադի Կիրիլ մետրոպոլիտը, ի պատասխան Լիպեցկի մարզի գուբերնատոր Օլեգ Կարալյովի այն առաջարկին, թե անհրաժեշտ է Եկեղեցու լեզուն փոխել արդի ռուսերենի, ասել է. «Աստվածպաշտությունն անհնար է փոխել արդի ռուսերենի, քանզի այդպիսի ծեսը հոգեւոր առումով արժեք չի ունենա: Աստվածպաշտությունը պետք է լինի վերերկրային»: Միեւնույն ժամանակ մետրոպոլիտը հավաստիացրել է, որ դեռ հեղափոխությունից առաջ Սինոդի շրջանակներում ձեւավորված հատուկ հանձնաժողովի աշխատանքները, որի նպատակն էր, պահպանելով հին արարողությունների տեքստերը՝ դրանք դարձնել ավելի հասու մարդկանց, ունենալու են իրենց շարունակությունը:

▼▼▼

Ինչպես նշել է Իսրայելի զբոսաշրջության նախարար Գիդեոն Էզրան՝ Իսրայել ժամանած ուխտավորներին կտրվեն հատուկ կրոնական վկայականներ՝ այս կամ այն սրբավայրը այցելած լինելու մասին: Դրանով Իսրայելի կառավարությունը ցանկանում է խթանել զբոսաշրջությունը երկրում: Վերջիններս կարծում են, որ ինչպես ամեն տարի 2 մլն. մուսուլման այցելում է Մեքքա, այնպես էլ հնարավոր է նույն ծավալներն ապահովել նաեւ քրիստոնյաների պարագայում, քանզի քրիստոնյաների համար Երուսաղեմը նույն «Մեքքան»է:

▼▼▼

Հուլիսի 30-ից Սարովում սկսվել են ուղղափառ աշխարհում մեծ համբավ ունեցող ս. Սերաֆիմ Սարովսկու 250-ամյակին նվիրված տոնախմբությունները, որին ցավոք չեն մասնակցելու պաշտոնական Մոսկվայի ներկայացուցիչները: Ամենայն հավանականությամբ, հիվանդության պատճառով, տոնակատարություններին չի մասնակցի նաեւ Ալեքսի Բ Պատրիարքը:

*Լրաքաղը*
*Տիգրան սրկ. ԲԱՂՈՒՄՅԱՆԻ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ

**հեռախոս՝**
**(0+31) 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. տպագր. 2.08.2004թ.

**Տպաքանակը՝ 2500**
**Գինը՝ 50 դրամ**